ԿԱՐԾԻՔ

Աստղիկ Յուրիկի Հովսեփյանի «Տարբերակված ուսուցման հիմնախնդրի իրականացման ուղիները տարրական դպրոցում» խորագրով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԺԳ. 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Արդի մանկավարժական հարացույցը և կրթության կազմակերպման մեթոդաբանական նոր մոտեցումները կողմնորոշված են ուսումնական տարբեր հնարավորություններով և ընդունակություններով օժտված անձի ձևավորմանը, ով ընդունակ է ունենալ իր քաղաքացիական դիրքորոշումները, արժեհամակարգը, կարող է պաշտպանել իր տեսակետը, քննադատորեն մտածել և ինքնուրույն գործել, իրացնել սոցիալական տարբեր դերեր:

Այս տեսանկյունից տարբերակված ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը կրթական գործընթացում արդյունավետ է դարձնում յուրաքանչյուր աշակերտի զարգացման ու սոցիալականացման գործընթացը:

Այս համատեքստում գրախոսվող ատենախոսությունն արդիական հնչեղություն ունեցող հետազոտություն է, որը միտված է տարրական դպրոցում տարբերակված ուսուցման հիմնախնդրի լուծմանն ու արդյունավետ ուղիների առաջադրմանը:

Ներածության մեջ հիմնավորված է հետազոտության արդիականությունը, ներկայացված են հետազոտության բաղադրիչները՝ օբյեկտը, առարկան, նպատակը, հետազոտության խնդիրները, առաջադիր վարկածը, մեթոդները, մեթոդաբանական հիմքը, գիտատեսական ու գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող հիմնադրույթները, որոնք բովանդակային առումով համապատասխանում են և տրամաբանորեն հիմնավորված արտացոլված են եզրակացությունների մեջ:

Ատենախոսության առաջին գլխում դիտարկված է հիմնախնդրի վերաբերյալ առկա գիտական գրականությունը, ժամանակակից հետազոտությունները:

Ատենախոսը հանգամանալից վերլուծել է հիմնախնդրի վերաբերյալ գիտական տեսությունները, հայեցակարգային մոտեցումները, բնութագրել «անհատականացում» և

«տարբերակում» հասկացությունները՝ ներկայացնելով դրանց սկզբունքային տարբերություններն ու գործնական առանձնահատկությունները դաս-դասարանային համակարգի պայմաններում: Ելնելով իր բազմամյա մանկավարժական փորձից և գիտական մոտեցումից՝ տվել է «տարբերակված ուսուցում» հասկացության իր սահմանումը:

Բնութագրված են տարբերակման տեսակները, առավելություններն ու թերությունները, տարբերակված ուսուցման տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկությունները, սկզբունքներն ու մանկավարժական պայմանները:

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է ներդասարանային տարբերակված ուսուցման արդյունավետության գիտագործնական հիմնավորմանը:

Սույն հետազոտության գիտական նորույթը և էական արժեքը կայանում է նրանում, որ ատենախոսը լրջագույն աշխատանք է կատարել: Նրա կողմից մշակվել և ներկայացվել են՝

- «Մայրենի», «Մաթեմատիկա», «Ես և շրջակա աշխարհը» առարկաներից եռամակարդակ տարբերակված առաջադրանքներ՝ ըստ սահմանված չափորոշչային պահանջների ու ակնկալվող վերջնարդյունքների,
- տարբերակված թեմատիկ, ինքնուրույն, դասարանական, աշխատանքների և տարբերակված թեստերի օրինակներ,
- տարբերակված ուսուցման տեխնոլոգիայի կիրառմամբ դասերի օրինակներ, որոնք իրականացվել են ինչպես ուսուցման ժամանակակից փոխներգործուն մեթոդների, այնպես էլ ատենախոսի կողմից մշակված հեղինակային մեթոդների և ուսուցանող ու զարգացնող խաղերի կիրառմամբ:

Այսինքն, տարրական դասարաններում ներառականության պայմաններում դասագործընթացը արդյունավետ և հետաքրքիր դարձնելու համար, ատենախոսը ցուցաբերել է մասնագիտական բարձր պատրաստություն և ստեղծագործող մանկավարժի մեծ ներուժ կրթական գործընթացում տարբերակված ուսուցման տեխնոլոգիային զուգահեռ կիրառելով ժամանակակից մանկավարժության մեթոդական-տեխնոլոգիական ողջ զինանոցն ու մանկավարժական պայմանները:

Այս գլխում ներկայացված է ատենախոսի մշակած ներդասարանային տարբերակված եռամակարդակ ուսուցման մոդելը, որում ներառված են տարբերակված

ուսուցման նպատակը, մանկավարժական մոտեցումները, սկզբունքները, մեթոդներն ու տեխնոլոգիաները, միջոցներն ու ձևերը, վերջնարդյունքները:

Երկրորդ գլխի վերջին ենթագլխում ներկայացված է տարրական դասարաններում տարբերակված ուսուցման տեխնոլոգիայի կիրառման և ատենախոսի մշակած ներդասարանային տարբերակված ուսուցման մոդելի արդյունավետության փորձարարական հիմնավորումը, որը նրա իրականացրած տեսական և գործնական հետազոտության վերլուծական-գնահատողական ամփոփումն է:

Ստացված տվյալները հիմնավորում են փորձարարական հետազոտության արդյունքները, առաջարկված տարբերակված առաջադրանքների, հեղինակային մեթոդների և ուսուցանող և զարգացնող խաղերի հմալիրի կիրառման նպատակահարմարությունը և մանկավարժական արդյունավետությունը՝ հավաստելով հետազոտության առաջադիր վարկածի ճշմարտացիությունը:

Ատենախոսության մեջ ակնհայտ են հեղինակի ստեղծագործական, հետազոտական և մասնագիտական կարողությունները, անձնական ներդրումը հատկապես տարբերակված առաջադրանքների, հեղինակային ուսուցանող և զարգացնող դիդակտիկական խաղերի մշակման ոլորտում:

Առանձնակի գիտական նորույթ և արժեք է ներկայացնում ներդասարանային տարբերակված ուսուցման մոդելը, որում ներառված են տարբերակված ուսուցման սկզբունքներն ու առանձնահատկությունները, ժամանակակից մանկավարժական մոտեցումները, որոնք մեթոդաբանական հիմք են հանդիսացել հետազոտության իրականացման համար, ատենախոսի մշակած դասերի ձևերն ու տեսակները, կիրառված ուսուցման միջոցները, հեղինակային մեթոդներն ու տարբերակված ուսուցողական և զարգացնող խաղերի համալիրը, մանկավարժական պայմանները, ակնկալվող վերջնարդյունքները, որոնց հետագա հրապարակայնացումը գործնական մեծ օգնություն կլինի հանրակրթական դպրոցի ուսուցիչների համար:

Դրանք հավաստի են դարձնում հետազոտության արդյունքների արժանահավատությունն ու հիմնավորվածությունը, մանավանդ որ տևական ժամանակ կիրառվել են ինչպես հանրակրթական դպրոցում և ունեցել են արդյունավետության բարձր ցուցանիշներ, այլև ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում:

Ատենախոսությունը ամբողջական, ինքնուրույն, արդիական հնչեղություն ունեցող տեսական և կիրառական հետազոտություն է, որն արտացոլում է հեղինակի հոգեբանամանկավարժական, մասնագիտական գիտելիքները, գիտահետազոտական ինքնուրույն աշխատանք կատարելու կարողությունները, ստեղծագործական ընդունակությունները:

Պահպանված են թեկնածուական ատենախոսության բովանդակային և կառուցվածքային կողմին ներկայացվող պահանջները:

Արժևորելով ատենախոսական հետազոտության ակնառու գիտական նորույթը և տեսագործնական նշանակությունը, ատենախոսի իրական գիտագործնական ներդրումը մանկավարժության տեսության մեջ՝ ունենք հետևյալ դիտարկումները, որոնք, իհարկե, չեն նսեմացնում ատենախոսության բարձր արժեքը.

- Առաջին գլխում ներկայացված հետազոտության տեսական-մեթոդաբանական հիմքերը ծանրաբեռնված են հիմնախնդրի վերաբերյալ տարբեր մոտեցումների վերլուծություններով,
- կարելի էր խուսափել երկրորդ գլխի առաջին ենթագլուխը տարբերակված տարամակարդակ առաջադրանքներով, ուսումնական աշխատանքի տարբեր տեսակների, թեստերի, դասերի օրինակներով ծանրաբեռնելուց : Կարծում ենք, որ դրանց մի մասը կարելի էր ներկայացնել հավելվածում :
- Առկա են տեխնիկական վրիպակներ, որոնցից կարելի էր խուսափել:

Եզրակացություն

Աստղիկ Յուրիկի Հովսեփյանի «Տարբերակված ուսուցման հիմնախնդրի իրականացման ուղիները տարրական դպրոցում» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԲԿԳԿ-ի կողմից ԺԳ. 00. 01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, և ատենախոսությունը երաշխավորվում է հրապարակային պաշտպանության:

Ընդդիմախոս՝

մանկ. գիտ. թեկնածու,

ՀՀ վաստակավոր մանկավարժ՝ Հ.Հ. Կարապետյան

2. 06. 2024թ.